

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13/2

7 ապրիլի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Պարզև Շահբազյանի 17.03.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 17.02.2015 թ-ի թիվ 201 որոշման դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետը, քննարկելով քաղաքացի Պարզև Շահբազյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 12.02.2015 թ-ի դրությամբ նրա ԱԱՀ-ի գծով չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 843.169 դրամ, այդ թվում՝ ապառք 430.408 դրամ, տույժ 132.996 դրամ, տուգանք 279.765 դրամ: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի կողմից 17.02.2015 թ-ին ընդունվել է թիվ 201 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Պարզև Շահբազյանից 843.169 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Նշվեց նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում փաստաթղթեր են ստացվել քաղաքացի Պարզև Շահբազյանի վերաբերյալ, որոնք անմիջականորեն առնչվում են սույն գանգատին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում նյութեր են նախապատրաստվում Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունը հիմնավոր լինելու փաստի կապակցությամբ և անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, հետևապես ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքացի Պարզև Շահբազյանի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Պարզև Շահբազյանի 17.03.2015 թ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

